Գեանջի (Գանձակի) դաշնադրութիւնը կապելուց յետոյ՝ Բագուն կրկին անցաւ պարսից իշխանութեան ներքոյ. Նադիրը նշանակեց այդ տեղ իւր կողմից կառավարիչ։ Նադիրի մահից յետոյ Բագուայ ղեկավարը դարձաւ Նադիրի իշխաններից մէկը Միրզա Մահամմէդ խան, որին յաջորդեց նորա որդի Մելիք Մուհամէդ խանը, որը ամուսնացել էր Ղուբայի Ֆեթալի խանի քրոջ հետ և ստիպուած էր ճանաչել խանի իրաւասութիւնը, և հարկ տալ նորան, մասնակցել նորա կատարած արշաւանքներում։ Այդ արշաւանքների ժամանակ Մելիք խանը քիչ էր մնացել զոհ գնար Ադուշենցիների զայրոյթին, որոնք չարդել էին Աւարի խանին իւր գնդով. նա ազատուեց շնորհիւ Ֆեթալի խանի մերձաւորների և պատսպարուեց Բագուում, երբ հալածուեց Քեօվդուշանցի Ուսմիա Էմիր Խամզայի ձեռամբ, բայց քաղաքի ամուր պարիսպները նորան փրկեցին, Ուսմիյը աւերելով Բագուայ խանութեան մի մասը հեռացաւ դէպի Դերբենդ 1779 թ.։

Մելիք խանը արգելք դրեց (բանտարկեց) ռուս վաճառականների և նոցա ապրանքների վրայ նորա համար, որ լեզգիների ձեռով երկու տղայք էին փախցրած Բագուից և վաճառած էին Հաշտարխանում և մի միայն գեներալ Եակոբիի վերադառնալուց յետ՝ յաջողուեց մէկ վաճառականի ազատել այդ վիճակից։

Մէլիք Մուհամմէդ խանի մահից յետոյ նորան յաջորդեց իւր երիտասարդ որդին Միրզա Մուհամմէդ խանը, որից գահը խլեց իւր հօրեղբայրը Մուհամմէդ Ղուլի խանը։ Միրզա Մուհամմէդը փախաւ Ղուբայ, ուր և մնաց, թէպէտ Դերբէնդի Շէյխ Ալի խանը աշխատում էր, որ նորան վերադարձնեն օրէնքով պատկանող հողերը։ Իմ Ղուբայի ծանօթ Աբաս Ղուլի խանը յառաջացել է այդ գահազուրկ Բագուայ տիրապետողի տոհմից։

Բագուայ վերջի խանն էր Հիւսէյին Ղուլի խանը, որը իւր չարագործութեան մեծ անունը թողել է պատմութեան մէջ։

Նա 1796 թ. երդուեց հաւատարիմ լինելու Ռուսաստանին և ուղարկելով պատգամաւորներ Պետերբուրգ, ինքը գաղտնի յարաբերութիւն ունէր Պարսկաստանի հետ. ճնշում և կողոպտում էր ռուսաց վաճառականներին և մի միայն 1800 թ. երբ երեւեցան զինուորական նաւերը, վճռեց բաւարարութիւն տալ, հարստա-